Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Լեռնահովիտ գյուղի Վ. Բարեղամյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (20 դասաժամ), ինֆորմատիկայի (4 դասաժամ), կենսաբանության (6 դասաժամ), ֆիզիկայի (6 դասաժամ), քիմիայի(5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1),
2) բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձնագիր,
4)«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում) ,
5) աշխատանքային գրքույկ,
6) ինքնակենսագրություն (Ձև 5),
7) մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի,
8) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
9)Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,
10)հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում),
11)որակավորման տարակարգ (առկայության դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը, փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում :
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թվականի օգոստոսի 31-ից մինչև սեպտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 15-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Գեղարքունիքի մարզի Լեռնահովիտ գյուղի Վ. Բարեղամյանի անվան հիմնական դպրոցում:
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ. Լեռնահովիտ, փողոց 1, շենք 1:
Տեղեկությունների համար զանգահարել 094 86-89-07 հեռախոսահամարով: